


Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH



400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400

VERY REV. SHNORK KASPARIAN

21 Մայիս, 1987.

Բարձրաշնորհ
Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հայոց
Ամերիկայի Արեւելեան Թեմին,
Նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ուրախութեամբ կ'ուզամ հաղորդել Ձերդ Սրբազանութեան թէ
Ապրիլ 27-28 երկու օրերուն հովուական այցելութիւն կատարած եմ
Քէնսէս Սիթի ապրող մեր հայ հայրենակիցներուն, որոնք ասկէ առաջ
բնաւ միխթարութիւնը չէին ունեցած հայ հոգեւորականի մը այցելու-
թիւնը վայելելու: Առաւել եւս ուրախացուց զիրենք երբ յայտնեցի թէ
Ձեր տնօրինութեամբ է որ կ'այցելէի եւ այդ կերպով անոնք կ'արժանա-
նային Ձեր Հայրական ուշադրութեան եւ հոգատարութեան:

Այդ երկու օրերուն կարողացայ այցելել ընտանիքներու,
ըլլայ իրենց տունը կամ գործատեղին, նաեւ հիւանդոստի երթալով. ուստի
բազում հայերու ծանօթանալով եւ զանոնք ի մի հաւաքելով, կարելի եղաւ
Ապրիլ 28-ի երեկոյեան ժողով մը գումարել Ձաւէն Հաթութեանի բնակա-
րանին մէջ ըտրելով Միգուրի Նահանգին, Քէնսէս Սիթի քաղաքի ՀԱՅԱՍՏԱՆ-
ՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ առաջին Միական Խորհուրդը հետեւեալ կազմով.-

Արա Չաքարեան, Ատենապետ. Ճէնիճըր Հաթութեան, Քարտուղարուհի.
Ձաւէն Հաթութեան, Գանձապահ. Աստղիկ Սթելլա Կիւլանեան, Ռօզ Օնպաշեան,
Նէթալի Հաթութեան, եւ Մայքըլ Ֆրէնքեան, Խորհրդակալներ.

Այժմ կը խնդրենք Ձեր հաստատումն ու վաւերացումը, մտջելով ի
համբոյր Ս.Աջոյդ խորին յարգանօք.


ՇՆՈՐՀՔ Մ.ՎՐԴ.ԳԱՍՊԱՐԵԱՆ, ՀՈԳ.ՀՈՒԻ